ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **12/03/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գալստյանը, Արման Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2. Հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում երիտասարդներին ընդգրկելու մասին:

4. <<ՏԻՄՄՕ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գումար վերադարձնելու մասին:

5. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 65 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 84 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Լսեցին
ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝

1. Հաստատել հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն 1,2,3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշումը՝

1. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել համայնքի բնակիչ Քրիստինե Սեյրանի Հարությունյանին

2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 27-ի <<Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում երիտասարդների ընդգրկման մասին>> թիվ 54 որոշումը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

Լսեցին

<<ՏԻՄՄՕ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով <<ՏԻՄՄՕ>>սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի գրությունը՝

1. <<ՏԻՄՄՕ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վերադարձնել սխալմամբ 900125002478 հաշվե համարին փոխանցված 2 505 464 /երկու միլիոն հինգ հարյուր հինգ հազար չորս հարյուր վաթսունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

Լսեցին

ԾԱԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նրմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի << Ծաղկաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 65 որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով '<<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Հաստատել համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմը՝

Խորհրդակցական մարմնի նախագահ՝ Արթուր Հարությունյան /համայնքի ղեկավար/

Քարտուղար՝ Լեյլի Խաչատրյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Անդամներ՝ Գարիկ Հայրապետյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

Նարինե Խաչատրյան, /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Արմենուհի Առաքելյան / ավագանու անդամ/

Կարեն Հովհաննիսյան /ավագանու անդամ/

Արման Հակոբյան /ավագանու անդամ/

Մուշեղ Խաչատրյան /համայնքի բնակիչ/

2. Հաստատել քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

Խորհրդակցական մարմնի նախագահ՝ Արթուր Հարությունյան /համայնքի ղեկավար/

Քարտուղար՝ Արա Մեսրոպյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Անդամներ ՝ Գարիկ Բաղալյան /աշխատակազմի քարտուղար/

Արմեն Արշակյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Արթուր Հովակիմյան / ավագանու անդամ/

Գառնիկ Կարապետյան / ավագանու անդամ/

Էդգար Հովհաննիսյան /<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն/

Աշխարհաբեկ Հովհաննիսյան /համայնքի բնակիչ/

3. Հաստատել Կրթության, մշակույթի երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական /այդ թվում՝ երեխաների պաշտպանության/ հարցերի խորհրդակցական մարմնի կազմը

Խորհրդակցական մարմնի նախագահ ՝ Արթուր Հարությունյան /համայնքի ղեկավար/

Քարտուղար՝ Լեյլի Խաչատրյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Անդամներ ՝ Գերասիմ Մկրտչյան /աշխատակազմի զարգացման ծրագրերի պատասխանատու/

Արման Հակոբյան /ավագանու անդամ/

Արմեն Մանուկյան /ավագանու անդամ/

Աննա Ասատրյան / <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն/

Սուսաննա Եգորյան / <<Ծաղկաձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն/

Արմինե Գևորգյան /<<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակից/

Ռուզաննա Ավետիսյան /համայնքի բնակիչ/

4.Սահմանել, որ համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ խորհրդակցական մարմինների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

5.Սահմանել, որ սույն որոշմամբ ձևավորված խորհրդակցական մարմինները գործելու են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

6. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 25-ի <<Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 63 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 84 որոշումը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղդասարյանը